«Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ "Four A Consulting" CJSC

audit accounting advisory assurance

Լիցենզիա ԱԾ 102
Հասցե Նալբանդյան 50/136 , ք Երևան ՀՀ,
Հեռախոս +374(10) 52 08 47

www. 4aconsulting.am
info@4aconsulting.am

License ԱԾ 102
Address Nalbandyan 50/136, Yerevan, RA
Telephone +374(10) 52 08 47

Անկախ աուդիտորական եզրակացություն

«ԻԴՐԱՄ» ՍՊԸ-ի մասնակցին,

Մեր կողմից իրականացվել է «ԻԴՐԱՄ» ՍՊԸ (Ընկերություն) կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Ֆինանսական հաշվետվությունների համար տնօրինության պատասխանատվություն

Ընկերության տնօրինությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունները Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան կազմելու և ճշմարիտ ներկայացնելու համար: Այս պատասխանատվությունը ներառում է՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգի սահմանում, կիրառում և պահպանում, հաշվապահական հաշվառման համապատասխան քաղաքականության ընտրություն և կիրառում, ինչպես նաև տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարում:

Աուդիտորի պատասխանատվություն

Մենք պատասխանատու ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան անցկացված աուդիտի արդյունքում կարծիք արտահայտել ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք պահպանենք մասնագիտական վարքագծի կանոնները, աուդիտը պլանավորենք ու իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ երաշխիքներ՝ ֆինանսական հաշվետվությունների՝ էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցներ ձեռք բերելու նպատակով ընթացակարգերի իրականացում:

Ընթացակարգերի ընտրությունը հիմնված է աուդիտորի դատողության վրա, ներառյալ խաբեության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկերը գնահատելիս աուդիտորն ուսումնասիրում է Ընկերության ֆինանսական հաշվետվությունները կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգը՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր ընտրելու, բայց ոչ Ընկերության ներքին վերահսկողության համակարգի

արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը ներառում է կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության, տնօրինության կողմից կատարած հաշվապահական գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատում:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիք

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս է «ԻԴՐԱՄ» ՍՊԸ -ի՝ 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

23 մայիսի, 2016թ.

Անիկ Մարտիրոսյան

Տնօրեն-Բաժնետեր

«ՅՈՐ ԷՅ ՔԱՍԼԹԻՆԳ»
"FOUR A CONSULTING"
00148693

Անդրեաս Հովհաննիսյան

Աուդիտոր-բաժնետեր